ԼՈՒՍԱՎԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գ. Թ. ՍԻՄՈՆՅԱՆ

Լուսավանը (այժմ Զարենցավան) հիմնադրվել է Գյումուշի հիդրոէլեկտրակայանի կառուցման շրջանում, 1946—1952 թթ.։ Հիդրոկայանի շրջակա բնակավայրերը չէին կարող բավականաչափ բանվորական ուժ տրամադրել կառույցին, և անհրաժեշտություն զգացվեց նոր բանվորական ավաններ կառուցել։

1946 թ. ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն և Մինիստրների սովետը հատուկ կոչով դիմեցին հանրապետության աշխատավորությանը՝ ակտիվորեն մասնակցել հիդրոկայանի կառուցմանը։ Դրանից հետո մեծ քանակությամբ բանվորական ուժ եկավ կառույց[1]։

Շինարարությունը հատկապես մեծ թափ ստացավ Հայաստանի կոմերիտմիության XIII համագումարից հետո, որը շինարարության շեֆությունը վերցրեց իր վրա և հիդրոկայանը հայտարարեց երիտասարդական կառույց[2]։ Ամենուրեք երիտասարդների հավաքներ էին կազմակերպվում, որոնք վերածվում էին հայրենասիրական ցույցի։ Հայրենանվեր գործին ծառայելու զգացումը համակում էր բոլորին։ Ախտայի շրջանից միայն մեկ հավաքով կառույց են մեկնում 200 երիտասարդներ, մեծ մասամբ՝ իրենց կոմերիտական կազմակերպության քարտուղարների հետ։ Սոլակ գյուղից շինարարություն են մեկնում 25 կոմերիտականներ, Ալափարսից՝ 22, կոմերիտկազմակերպության քարտուղար Ավետիք Ավետյանի հետ[3]։ 1948 թ. կառույցում աշխատում էին Ներքին Ախտայից՝ 41, Սոլակից՝ 40, Վերին Ախտայից՝ 30, Աթարբեկյանից՝ 39, Ռնդամալից՝ 58, Ալափարսից՝ 40 հոգի, Արքելից՝ գյուղի բնակիչների մեծ մասը[4]։

Մեծ քանակությամբ հայրենադարձներ են մեկնում շինարարություն, նրանք բուռն հայրենասիրությամբ են մասնակցում կառույցի աշխատանքներին։ «Երկար տարիներ թափառելով օտար երկրներում, մենք՝ հայրենաբաղձ հայերս, անընդհատ երազել ենք տեսնել մեր հարազատ հայրենիքը, մասնակցել նրա ծաղկման ու բարգավաճման գործին։ Հայրենիք վերադառնալու առաջին օրից աշխատում եմ Գյումուշգէսի շինարարության Ախտայի տեղամասում որպես հյուսն, այժմ ես ինձ ուրախ ու երջանիկ եմ զգում, որ իմ աշխատանքային քրտինքը թափում եմ հարազատ հայրենիքի զարգացման համար», դրում էր հայրենադարձ Արշավիր Արզումանյանը[5]։ Նա և իր բրիգադի անդամները ոչ միայն գործով, այլև ինքնագործունեության խմբի համերգներով ոգևորում են շինարարներին։

Բանվորների թիվն զգալիորեն ավելացավ հայրենադարձ հայերի հաշվին։ 1947 թ. շինարարությունում աշխատում էին 398 հայրենադարձներ[6]։

---

1 *Տե՛ս Հայհիդրոէներգաշինի ընթացիկ արխիվ, դիմումների թղթապանակ և հրամանների գիրք, 1946։*

2 *Տե՛ս ՀԿԿՄ XIII համագումարի որոշումը, Երևան, 1947։*

3 *Տե՛ս «Լենինի դրոշով», № 5, 1948։*

4 *ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 4, գ. 236, թ. 7։*

5 *«Ավանդարդ», № 9, 1948։*

6 *Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 163, ց. 17, գ. 756, թ. 46։*

Բանվորական ուժի հավաքագրման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ XIV համագումարը և ՀԿ(բ)Կ ԿԿ 1949 թ. չորրորդ պլենումը։ Քննության առնելով Գյումուշի շինարարության ընթացքը, պլենումն արձանագրեց, որ էլեկտրակայանի կառուցումը Հայկական ՍՍՀ-ի բոլոր կուսակցականների պատվի գործն է։ Հանրապետության բոլոր շրջկոմներն ու քաղկոմները պլենումի որոշումներով պարտավորվում էին շինարարությունն ապահովել բանվորական ուժով[7]։ Պլենումից հետո մեծ հոսք սկսվեց դեպի շինարարություն։ Սևանգէսից եկան շուրջ 700 որակյալ բանվորներ, ինժեներներ ու տեխնիկներ։ 1500 բանվորներ աշխատանքի եկան Սովետական Միության տարբեր քաղաքներից[8]։

Բանվորական ուժի հոսքը պայմանավորում է արդեն հիմնադրված ավանի մեծացումն ու բարեկարգումը։ Մինչև 1948 թ. ավանն անվանվում է Ալափարսի տեղամաս, Ախտայի տեղամաս № 1, 7-րդ ավան, ապա՝ առաջին անգամ 1948 թ.՝ Լուսավան[9]։ Այս անունը կապվում է կառուցվող էլեկտրակայանի հետ, որը շրջակայքում էլեկտրական լույս ունեցող միակ ավանն էր։ Կայանի կառուցման ընթացքում է ծնվում նաև Լուսակերտ ավանը, որի անունը խորհրդանշում է կայանի ստեղծագործ ուժը։

Մի քանի տարվա ընթացքում Զանգվի ձախ ափին, որտեղ առաջ միայն քարակույտեր էին, խոյանում են էլեկտրակայան կառուցողների բնակելի շենքերը, և կարճ ժամանակամիջոցում գոյանում է բանվորաշատ մի ավան։ Այժմյան ներտաշ հաստոցների գործարանի տեղում կառուցվում է տեխնիկայի վերանորոգման բազա (մինչև հիմա էլ տեղացիները քաղաքի այդ մասն անվանում են ռեմզե (ремонтный завод): Սա Լուսավանի առաջին ձեռնարկությունն էր։

Ինչո՞ւ հատկապես այստեղ հիմնադրվեց ավանը, որո՞նք են դրան նպաստող պայմանները.

ա) Բնակավայրը հեռու չէր Գյումուշգէսից, և նրա բանվորներն, առանց փոխադրամիջոցի կարող էին մասնակցել կառույցի բոլոր հանգույցների աշխատանքներին։ Սա բանվորների մի զգալի մասի համար սմենահարմար բնակավայրն էր։ Հեռու չէր նաև Ախտայից։

բ) Տեղը հարթ էր և հարմար՝ հետագայում զարգանալու համար։

գ) Երևան—Հրազդան երկաթգիծն անցնելու էր ավանի մոտով, որը կխթաներ նրա զարգացումը[10]։

դ) Ալափարսի քարհանքերը՝ ավանից չորս կմ. հեռու գտնվող բլուրները, որոնց մոտով երկաթգիծն էր անցնում, անսպառ աղբյուր էին պեմզաբլոկի, աղյուսի, կղմինդրի գործարաններ հիմնելու համար։ Ավելին, հետագայում այդ քարհանքերից ստացված պեմզա-բետոնը լայն կիրառություն ստացավ հիդրոտեխնիկական աշխատանքներում։ Աշխարհում առաջին անգամ պեմզաբետոն օգտագործվեց հիդրոտեխնիկայի մեջ[11]։

---

7 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 81, ց. 20, գ. 14։

8 Տե՛ս Տ. Կ. Սաղաթելյան, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հանրապետության էլեկտրիֆիկացման կազմակերպիչ, Թեկն. դիսերտ., Երևան, 1964, էջ 78։

9 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 17, գ. 756, թ. 52։

10 Երևան—Ախտա—Սևան երկաթգծի կառուցումը ավարտվում է 1951 թ.։ Նոյեմբերի 29-ին առաջին գնացքը Երևանից ժամանում է Լուսավան։

11 Տե՛ս Гидротехнический бетон на лнтоидной пемзе, Изд. АН Арм. ССР, 1958.

Լուսավանի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ խճուղու կառուցումը մինչև կայանի գլխավոր հանգույցը, որով ավանը կապվեց հանրապետության տնտեսական շրջանների հետ։ Ոչ պակաս նշանակություն ունեցավ ջրմուղի կառուցումը։

Մինչև 1948 թ. Լուսավանում առանձին տերիտորիալ կուսակցական կազմակերպություն չի եղել։ Առաջին կուսկազմակերպությունը այնտեղ ստեղծվում է 1948 թ. դեկտեմբերին (քարտուղար է ընտրվում Ա. Փանոյանը)[12]։

Շինարարության ղեկավարության և կուսակցական կազմակերպության ջանքերով 1949 թ. բոլոր ընտանիքները վրաններից տեղափոխվում են բնակարաններ։ Արդեն 1949 թ. վերջերին բնակելի ժամանակավոր և հիմնական կառույցներն ունեին 10.193 քառակուսի մետր տարածություն[13]։

Լուսավանի հիմնադրման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են և մեծ ավանդ ունեն շատ-շատերը։ Սկզբից մինչև վերջ այնտեղ է աշխատել որմնադիր Եղիշե Հարությունյանը, որն աճեցրել է շատ անվանի վարպետներ՝ Ա. Ոսոտոմյան, Հ. Ավագյան, Ս. Սարիբեկյան և ուրիշներ[14]։ Որմնադիր Կարլեն Սեդրակյանը քսան աշակերտ է պատրաստել, Արմենակ Քերոբյանը և իր կոմերիտական որդին՝ Սաղաթելը, որը 15 տարեկանից շինարար է աշխատել, չորս տարի օր-օրի շենքեր են բարձրացրել։ Ավանի շինարարության հարվածային-ներ են որմնադիրներ Մ. Կարապետյանի, Մ. Բաղալյանի բրիգադները։

Հարվածային շինարարության կոլեկտիվը 1952 թ. համամիութենական սոցիալիստական մրցության մեջ հաղթող է ճանաչվում։ Մինգեչաուրի հիդրոէլեկտրակայանի հետ մրցությունում հաղթող են ճանաչվում գլխավոր հանգույցի լեռնագործ հորատողների վեց բրիգադները, նրանց թվում Ա. Ղազարյանի, Ա. Իսախանյանի, Ա. Հարությունյանի ղեկավարած բրիգադները, որոնք նվաճում են ՀԱՄԿԽ-ի ու ՍՍՀՄ էլեկտրակայանների մինիստրության փոխանցիկ կարմիր դրոշը և առաջին մրցանակ։ Երկրորդ կարգի մրցանակներով են պարգևատրվում կոմերիտական ստախանովականներ Ա. Նիկողոսյանի, Մ. Պողոսյանի, Է. Թադևոսյանի ղեկավարած թունելագործ բրիգադները։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1952 թ. մայիսի 28-ի հրամանագրով շինարարության աշխատողների մի մեծ խումբ պարգևատրվում է կառավարական բարձր պարգևներով, այդ թվում՝ մեծավաստակ շինարար, շինարարության պետ Գ. Հ. Աղաբաբովը, շինարարության գլխավոր ինժեների տեղակալ Լ. Ա. Ջարագյանը, նախագծային տեխնիկական բաժնի պետ Ա. Ա. Խոջա-Էյնաթովը՝ «Կարմիր դրոշի» շքանշանով, 53 հոգի՝ «Աշխատանքային արիության համար» և «Աշխատանքային գերազանցության» համար մեդալներով[15]։

1953 թ. ապրիլի 20-ին ավարտվում են էլեկտրակայանի առաջին հերթի շինարարության աշխատանքները։ Երկու ագրեգատները շահագործման հանձնելու կապակցությամբ մի խումբ աշխատողներ ներկայացվում են կառավարական բարձր պարգևի։ Վարդան Ջուրաբյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով, 6 հոգի՝ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, 10 հոգի՝ «Աշ-

---

12 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 4, գ. 248, թ. 6։

13 Տե՛ս Հայհիդրոէներգաշինի ընթացիկ արխիվ, Գյումուշգեսի 1949 թ. տարեկան հաշվետվություն։

14 Տե՛ս «Հարվածային շինարարություն», № 19, 1950։

15 Տե՛ս «Հարվածային շինարարություն», № 9, 1952։

խատանքային արիության համար» և 34 հոգի՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով[16]։

1954 թ. ավարտվում է հիդրոկայանի կառուցումը, մեխանիզմները հավաքվում են, ապամոնտաժվում, տեղափոխվում Սևանի ու Արզնու էլեկտրակայանների շինարարությունում օգտագործելու համար։

Լուսավանի, ինչպես նաև Ախտայի (Հրազդան) շրջանի համար վճռական նշանակություն ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության XVIII համագումարը (1956), որը դարավոր գյուղատնտեսական շրջանի համար ուղեգծեց ժամանակակից արդյունաբերության բարձր մակարդակ ապահովող մի շարք ձեռնարկությունների կառուցման ծրագիր, որով շրջանը կարճ ժամանակամիջոցում փոխելու էր իր դեմքը։

Լուսավանի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թթ. հնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿԿ XX համագումարի դիրեկտիվները, որոնք ինչպես Սովետական Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի տնտեսության զարգացման նոր հեռանկարներ էին բացում[17]։ Ի թիվս հանրապետության այլ շրջանների, մեծ և կարևոր խնդիրներ էին դրվում Ախտայի շրջանի աշխատավորության առջև։ Շրջանում արդյունաբերական ձեռնարկություններ կառուցվելու էին միայն Լուսավանում։ Այստեղ հիմնադրվելու էին ոչ միայն հանրապետական, այլև անդրկովկասյան նշանակության ձեռնարկություններ։ Հանրապետությունում և Անդրկովկասում զարգացող մեքենաշինության պահանջները բավարարելու համար Լուսավանում հիմնադրվում էին կենտրոնական ձուլարան և գործիքաշինական գործարաններ[18]։ Ներտաշ հաստոցների գործարանը արտադրելու էր ՍՍՀՄ-ում արտադրվող ամենարարդ հաստոցներից մեկը։

Լուսավանում կառուցվելու էր նաև երկաթբետոնյա կառուցվածքների գործարան, որը ապահովելու էր հանրապետության հիդրոէլեկտրակայանների շինարարության, ինչպես նաև այլ կառույցների պահանջները։

Ախտայի շրջանի և Լուսավանի զարգացման գործում հսկայական դեր ունեցան ՍՄԿԿ XXI արտահերթ համագումարի և ՀԿԿ XX համագումարի որոշումները[19], որոնք յոթնամյակում նախատեսում էին արդյունաբերության անն-ախընթաց աճ։ ՀԿԿ XX համագումարն Ախտայի շրջանում նախագծում էր հսկա արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում։ Նախատեսվում է փոխել շրջանի դեմքը և այնտեղ արդյունաբերության կարևորագույն կենտրոններ ստեղծել՝ Հրազդան և Լուսավան։

Այս ձեռնարկությունների կառուցումը պահանջում էր մեծ քանակությամբ բանվորական ուժ։ ՀԿԿ Ախտայի շրջանային կոմիտեն բանվորների հավաքագրում է կազմակերպում։ Սակայն միևնույն ժամանակ հրահանգ էր տրվում հավաքագրումն այնպես կազմակերպել, որ գյուղատնտեսական աշխատանքները չտուժեն։ ՀԿԿ Ախտայի շրջանային կոմիտեն խնդրում է ՀԿԿ կենտրոնական կոմիտեին՝ վերադաս կազմակերպություններին ցուցում տալ արագացնե-

16 Նույն տեղում, 16. XI. 1953։

17 Տե՛ս Ս. Հ. Թովմասյան, ՀԿԿ կկ հաշվետու զեկուցումը ՀԿԿ XVIII համագումարին, 1956, էջ 32։

18 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 20, թ. 63։

19 Տե՛ս Բանաձև Հայաստանի կոմունիստական կուսակցության արտահերթ XX համագումարի, 1959, էջ 8—9։

լու ձեռնարկությունների կառուցման աշխատանքները[20]։ Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1958 թ. աշնանը հիմնականում պատրաստ էր երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի շորացման շենքը։ Գործարանի լրիվ շահագործման հանձնելու աշխատանքներին զուգընթաց, ձեռնարկությունում սկսվում են արտադրական աշխատանքները։ Այդ գործում մեծ ավանդ է ներդրել ձեռնարկության անփոփոխ դիրեկտոր Մ. Նսայանը։ Գործարանի նախագծային կարողությունը կազմում է 40 հազար խորանարդ մետր կառուցվածք, որին հասնելու համար անհրաժեշտ էին մի շարք օժանդակ կառույցներ, տեղամասեր, որոնք կառուցվում են յոթնամյակի առաջին տարիներին։

Մյուս ձեռնարկությունների շինարարական աշխատանքներն արագացնելու գործում էական դեր է խաղում Արզնու և Գյումուշի հիդրոկայանների շինարարական վարչության Լուսավան տեղափոխելը։ Վարչությունը վերանվանվում է Հիդրոէներգաշինի Լուսավանի շինարարական վարչություն։ Շրջանային կուսակցական կոմիտեն շինվարչության առջև խնդիր է դնում արագացնել հաստոցաշինական գործարանի կառուցումը, ուշադրություն դարձնել շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը[21]։ Շինմասի պետ Ա. Եղյանը կարճ ժամանակում նորոգում է շենքը, արագացնում շինարարական աշխատանքների ընթացքը, և 1959 թ. հուլիս ամսին ձեռնարկության շենքը պատրաստ էր արտադրանքի առաջին նմուշները թողարկելու համար։ Հոկտեմբերին պատրաստվում է առաջին նմուշը, և սկսվում է կոլեկտիվի ստեղծագործական բեղուն կյանքը։ Համարյա նույն ժամանակաշրջանում շահագործման է հանձնվում գործարանին կից ձուլման ցեխը՝ ապագա կենտրոնական ձուլարանի առաջին արտադրամասը։

Լուսավանի ամենամեծ արդյունաբերական ձեռնարկությունը գործիքաշինական գործարանն էր, որի կազմում էր նաև կենտրոնական ձուլարանը։ Երկու ձեռնարկությունները զբաղեցնում էին շուրջ 35 հեկտար տարածություն։ 1958 թ. վերջերին գցված էին գործարանի բոլոր հիմնական կառույցների հիմքերը, մոնտաժված էին 500 հատ 18 մետր բարձրությամբ սյուներ, ավարտման էին մոտենում շուգունաձուլական մասնաշենքի քարային աշխատանքները։

Հայաստանի Ժողտնտխորհը, ելնելով այն բանից, որ հաստոցաշինական, մեքենաշինական ձեռնարկությունների ձուլվածքի կարիքը մեծ է, որոշում է դադարեցնել գործիքաշինական գործարանի հիմնական կառույցների շինարարությունը և դրան հատկացված միջոցները, առկա բանվորական ուժը տրամադրել կենտրոնական ձուլարանի շինարարությանը, որպեսզի ձեռնարկությունը 1960 թ. արտադրանք տա[22]։ Այս որոշումը կայացվել էր հապճեպ, առանց խորամուխ լինելու շինարարական աշխատանքների ընդհանուր վիճակի մեջ։ Բանն այն է, որ գործարանի շինարարությունն ընթանում էր ամբողջ բարդ կոմպլեքսով։ Այս շրջանում կառուցվում էին միայն ձեռնարկության ցեխերը, իսկ ջերմակայանի, ջրմուղի, կոյուղու և, որ ամենակարևորն է, երկաթուղագծի հատվածի շինարարական աշխատանքները չէին սկսվել, նույնիսկ դրանց տեխ-

20 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 37, թ. 14։

21 Տե՛ս նույն տեղում, գ. 72, թ. 135։

22 Տե՛ս Ջարենցավանի կենտրոնական ձուլարանի ընթացիկ արխիվ, ժողտնտխորհի 1959 թ. հրամանները։

նիկական փաստաթղթերը չէին պատրաստվել։ Առանց հիշյալ աշխատանքնե-
րի, գործարանի որևէ ցեխի շահագործման հանձնումն անհնար էր դառնում։

Շրջանային կուսակցական կոմիտեն, քննության առնելով այս հարցերը,
ճիշտ է կողմնորոշվում և հարց է հարուցում ՀՍՍՀ Մինիստրների սովետի առջև
կարճ ժամկետում վերանայել գործիքաշինական գործարանի շինարարության
պլանները և միջոցառումներ ձեռնարկել շինարարությունն ամբողջ կոմպլեքս-
սով շարունակելու համար։ Այս հարցն ամբողջ սրությամբ դրվում է նաև շըր-
ջանային կուսակցական ակտիվի ժողովում[23]։

Շրջանային կուսակցական ակտիվի ժողովի և կուսակցական կոմիտեի
ազդանշանները կասեցնում են ժողտնտխորհի սխալ պլանավորումը, և աշ-
խատանքները շարունակվում են թե՛ գործիքաշինական գործարանի, և թե՛
կենտրոնական ձուլարանի շինարարության ուղղությամբ։

Կենտրոնական ձուլարանը, որ գրավում էր 17 հեկտար տարածություն,
արագ թափով կառուցվում էր։ ՍՄԿԿ XXI համագումարի որոշումները կատա-
րելու համար ծավալված սոցիալիստական մրցության առջևից էին ընթանում
Ա. Ավետիսյանի ղեկավարած որմնադիրների և շինարարական տեխնիկումի
շրջանավարտ Հ. Կոժոյանի արմատուրագործների բրիգադները։ Արմատուրա-
գործներ Ի. Ասրյանը, Վ. Մեջլումյանը արտադրական առաջադրանքները կա-
տարում են 120—150 տոկոսով։ Նրանց ակտիվորեն օգնում են հյուսներ Ա. Այ-
վազյանը, Լ. Կարապետյանը և ուրիշներ։ Որմնադիր Սուրեն Մաղաքյանը մըշ-
տապես գերակատարում էր օրվա առաջադրանքները[24]։ Շինարարության բան-
վորական կոլեկտիվը հետևում էր Աթարբեկյանի հիդրոկայանի շինարարների
օրինակին, որոնք ժամկետից շուտ, Հոկտեմբերյան հեղափոխության տարե-
դարձի նախօրյակին գործարկեցին հիդրոկայանը՝ ոգևորություն ու խանդավա-
ռություն հաղորդելով ոչ միայն շրջանի, այլև հանրապետության բոլոր շինա-
րարական ու արտադրական կոլեկտիվներին։

Շինարարության վարչության Լուսավան տեղափոխվելը դրականապես
անդրադարձավ գործիքաշինական գործարանի և կենտրոնական ձուլարանի
աշխատանքների վրա։ Նորաստեղծ սկզբնական կուսակցական կազմակերպու-
թյան աշխատանքը (քարտուղար Գ. Համազասպյան) դրական օրինակ հան-
դիսացավ մյուս կազմակերպությունների ու արտադրական ձեռնարկություն-
ների համար։ ՀԿԿ Հրազդանի (Ախտան վերանվանվեց Հրազդան) շրջանային
XXIX կոնֆերանսը, որը գումարվեց 1959 թ. դեկտեմբերի 2-ին, ամփոփեց շի-
նարարական վարչության տասը ամիսների աշխատանքների արդյունքները.
առաջադրանքները կատարվել էին 109,6 տոկոսով, կամ պլանով նախատես-
ված 16.780 հազար ռուբլու դիմաց իրացվել էր 18.384 հազար ռուբլի։ Մեկ
բանվորի միջին արտադրողականությունը կազմել էր 107,5 տոկոս[25]։

Ի պատիվ գումարվող հուլիսյան պլենումի ծավալվում է սոցմրցություն,
որի առջևից էին ընթանում Լևոն Սողոմոնյանի, Տիգրան Սայադյանի ղեկա-
վարած բրիգադները[26]։ Բազմաթիվ տղամարդկանց հետ շինարարական հրա-
պարակներում իրենց ավանդն են ներդնում նաև լուսավանցի կանայք։ Ռ. Մու-

---

23 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 18, գ. 72, թ. 122։
24 Տե՛ս «Լենինի դրոշով», № 64, 1959։
25 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 66, թ. 32։
26 Տե՛ս «Լենինի դրոշով», № 54, 1960 թ.։

բադյանի բրիգադը, որ կազմված էր միայն աղջիկներից, առաջադրանքները կատարում էր 140 տոկոսով։ Հատկապես աչքի են ընկնում շինարարներ Ն. Ելիզբարյանը, Լ. Սահակյանը, որոնք առաջադրանքները կատարում են 160—180 տոկոսով։

ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեն ամեն ինչ անում է, որպեսզի գործիքաշինական գործարանը 1961 թ. շահագործման հանձնվի։ Առհասարակ գործարանի շինարարական աշխատանքները շրջանային կուսակցական կոնֆերանսներում, պլենումներում, ակտիվի ժողովներում մշտապես առաջին պլանին են դրվել։ Այսպես, 1960 թ. մարտի 15-ին կայացած ՀԿԿ Հրազդանի շրջանի կուսակցական ակտիվի ժողովը, որ նվիրված էր ՀԿԿ XXI համագումարի արդյունքներին ու կուսակցական կազմակերպությունների խնդիրներին, նշեց, որ զգալիորեն բարելավվել են արդյունաբերության շինարարական աշխատանքները։ Գործիքաշինական գործարանի և կենտրոնական ձուլարանի շինարարական աշխատանքները ապահովել էին պետական առաջադրանքների կատարումը, և կուսակցական ակտիվի ժողովը ջերմ դրվատանքի խոսք ասաց շինարարներին և հույս հայտնեց, որ նրանք ձեռնարկության առաջին հերթի աշխատանքները կավարտեն 1961 թ.[27]։

Ակտիվի ժողովը հարց է բարձրացնում ՀՍՍՀ Ժողտնտխորհի առջև գործարանի ձուլման կոմպլեքսն անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու մասին, որպեսզի հնարավոր լինի գործարանի առաջին հերթի աշխատանքներն ավարտել 1961 թ.[28]։ Սակայն Ժողտնտխորհը միայն 1961 թ. փետրվարին է հրահանգ տալիս մասնաճյուղային վարչություններին, ի թիվս մյուս ձեռնարկությունների, բավարարել նաև գործիքաշինական գործարանի պահանջները[29]։ Դա խիստ ետ է գցում ձեռնարկության շին-մոնտաժային աշխատանքները և հարվածում պետական առաջադրանքների կատարմանը։ Շինարարական վարչությունը ժամանակին չկարողացավ իրացնել նախատեսված 4 մլն. ռուբլի[30]։

Պահանջված շինանյութերն ու սարքավորումն ստանալուց հետո, բանվորական ուժի մի զգալի մասը ժամանակավորապես տեղափոխվում է ձուլարանի ստանդարտ և ոչ ստանդարտ սարքավորումների մոնտաժման աշխատանքների վրա։ Սակայն աշխատանքները շատ դանդաղ էին ընթանում։ Երկաթուղու հատվածի ժամանակին չհասցնելը և բանվորական ուժի պակասը լուրջ կերպով խոչընդոտում էին գործիքաշինական ձեռնարկության ու ձուլարանի կառուցման ընթացքին։ Շինարարության կոլեկտիվն ուժերի վերջին լարումով միայն կարողանում է տարվա առաջին ամիսների պլանները կատարել։ Մեծ աշխատանք է թափել Շ. Մելքոնյանի բրիգադը, որը աշխատանքային առաջադրանքները կատարում էր 120—130 տոկոսով[31]։

Առաջադրանքների կատարմանը նպաստեց Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատի շինարարության կոմպլեքսային բրիգադի (բրիգադիր Ռուրիկ Բադրատյան) փորձի տարածումը։ Բրիգադը, որ կազմված էր միայն կոմերիտականներից, շինանյութերի խնայողության պահեստ էր ստեղծել, որով պետք է

27 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 90, թ. 14։

28 Տե՛ս նույն տեղում, թ. 42։

29 Տե՛ս Զարենցավանի գործիքաշինական գործարանի (այսուհետև ԶԳԳ) ընթացիկ արխիվ, ընդհանուր բաժին, ՀՍՍՀ Ժողտնտխորհի 1961 թ. փետրվարի 17-ի որոշման 3, 4 կետերը։

30 Տե՛ս «Լենինի դրոշով», № 24, 1961։

31 Նույն տեղում։

40 մահճակալանոց մանկամսուրի շենք կառուցեին։ Ամեն աշխատող 24 ժամ շաբաթօրյակի էր դուրս գալիս։ Այս փորձը մեծ տարածում ստացավ Հրազդանի շրջանի բոլոր շինարարական ձեռնարկություններում, այդ թվում նաև գործիքաշինական գործարանի և ձուլարանի շինարարական մասերում։ Շինարարական նյութերի խիստ խնայողությամբ նրանք կարողանում են կառուցել ավելին, քան պահանջվում էր պետական նորմատիվով։

Շինարարության կոլեկտիվի կազմակերպված աշխատանքը, մատակարարման բաժնի աշխատանքների բարելավումն ապահովեցին 7 ամսվա պետական առաջադրանքների կատարումը։ Լավագույն աշխատանքի արդյունքը եղավ այն, որ կոլեկտիվը ժամկետից շուտ հանձնեց մոդելային ու մեխանիկական ցեխերը, որոնք և տվեցին ձեռնարկության առաջին արտադրանքը՝ 65 հազար ռուբլու համախառն արտադրանք (գների նոր մասշտաբով)[32]։

ՀԿԿ Հրազդանի շրջանային կոնֆերանսը՝ ամփոփելով յոթնամյակի երրորդ տարվա յոթ ամսվա առաջադրանքների կատարումը, ոգևորությամբ արձանագրեց նոր ձեռնարկության առաջին խոստումնալից քայլերը, ՀՍՍՀ Ժողտնտխորհի առջև հարց է բարձրացնում ավելացնել շինարարության ֆինանսավորումը, Հայհիդրոէներգաշինի շինարարության վարչության առջև խնդիր է դնում գործող ցեխերի ու տեղամասերի աշխատանքն ապահովելու համար շահագործման հանձնել ջեռուցման համակարգը, ջրմուղը, կոյուղին, օդափոխիչ համակարգը, հնոցային տնտեսությունը և բնական գազի մայրուղին, կարճ ժամանակամիջոցում ավարտել ստացված սարքավորումների ու մեքենաների տեղադրման աշխատանքները։ Կոնֆերանսը շինարարներին պարտավորեցնում է 1962—63 թթ. շահագործման հանձնել գլխավոր ցեխերն ու արտադրամասերը[33]։

Գործարանի դիրեկտոր Գ. Ռուսովի, կուսակազմակերպության քարտուղար Ի. Ա. Սարդայանի և մյուսների ջանքերով ձեռնարկության աշխատանքը կարգավորվում է։ 3-րդ և 4-րդ եռամսյակներում պատրաստվում է բռնկվող նյութերի պահեստը, բարելավվում են միջգործարանային ճանապարհները, զգալի գործ է կատարվում հսկայական շոգեկաթսայի կառուցման ուղղությամբ, որը շոգի էր մատակարարելու մյուս ձեռնարկություններին և ավանի բնակելի շենքերին[34]։ ՀՍՍՀ Ժողտնտխորհը որոշում է «մոնտաժման պատասխանատվությունը թողնել ձեռնարկության սեփական ուժերի վրա և ձեռնարկության գործարկումը ապահովել 1962 թ. 4-րդ եռամսյակում»։ Ձեռնարկության ընդհանուր կուսակցական ժողովը քննելով ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի բյուրոյի որոշումը ձուլարանը դեկտեմբերի 1-ին շահագործման հանձնելու մասին, հանրագումարի է բերում նախորդ տարվա աշխատանքի արդյունքները, քննադատում առանձին պատասխանատու աշխատողների ու բաժինների աշխատանքների թերությունները[35]։ Սակայն առաջին կիսամյակում անբավարար էր կառույցի շին-մոնտաժային աշխատանքների կատարման ընթացքը[36]։ Զուգունի Ձուլման մասնաշենքի շինարարական աշխատանքների պլանը կատարվել էր միայն 40,5 տոկոսով, ներգործարանային երկաթուղագծի կառուցումը՝ 21,6,

32 Տե՛ս ՁԳԳ ընթացիկ արխիվ, ընդհանուր բաժին, 1961։
33 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 103, թթ. 38—43։
34 Տե՛ս «Լենինի դրոշով», № 102, 1961 թ.։
35 Տե՛ս ՁԳԳ ընթացիկ կուս. արխիվ, 1962 թ. փետրվ. 15-ի ժողովի որոշումը։
36 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 23, ց. 19, գ. 124, թ. 9։

շրամատակարարումը՝ 15, կոմպրեսորների կայանը՝ 67,5, էլեկտրամատակարարումը՝ 72,8 տոկոսով, պլանով նախատեսված 12690 հազար ռուբլու դիմաց կատարված են 4260 հազար ռուբլու շինարարական աշխատանքներ[37]։ Արձանագրելով շինարարության անբավարար ընթացքը, 1962 թ. օգոստոսի 3-ին ՀԿԿ Հրազդանի շրջկոմի բյուրոն միաժամանակ գործնական միջոցառումներ է մշակում շինարարական աշխատանքները ռացիոնալ ձևով կազմակերպելու և բանվորական ուժի հոսունությունը դադարեցնելու ուղղությամբ։ Շինարարության վարչության ղեկավարներին պարտավորեցնում է երկու օրվա ընթացքում կազմակերպել շինարարական վարչության տեղամաս, առանձնացնել համապատասխան աշխատողներ։ Տեղամասի պետ է նշանակվում Ն. Ղազարյանը։ Շինարարությունը, մյուս շինկազմակերպությունների հաշվին ապահովվում է անհրաժեշտ փոխադրամիջոցով։

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ շինարարության աշխատանքները նոր թափով են ծավալվում։ Զուլարանի կոլեկտիվի և շինարարական վարչության երկարատև տքնաջան աշխատանքի շնորհիվ 1963 թ. փետրվարի 13-ին շարք է մտնում կենտրոնական ձուլարանը։ Գործարանի մեխանիկական բաժանմունքում տեղի է ունենում աշխատավորների բազմամարդ միտինգ, որին մասնակցելու էին եկել ամբողջ Լուսավանի ու Հրազդանի և շրջակա գյուղերի բնակիչները։ Միտինգը բացում է հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը։ «Մինչև այժմ,— ասում է նա,— մենք ձուլվածք էինք ստանում երկրի հեռավոր վայրերից, ներկայումս նոր ցեխի լրիվ գործարկմամբ հնարավորություն կունենանք ապահովելու հանրապետության հաստոցաշինական գործարանների պահանջները»[38]։

Զուգունի ձուլվածքի կոմպլեքսի շինարարական մոնտաժային աշխատանքները բարձր որակով կատարելու համար գործիքաշինական գործարանի շինարարական վարչության և ենթակապալառու կազմակերպությունների մի խումբ աշխատողներ պարգևատրվում են ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով[39]։

Գործիքաշինական գործարանի կառուցումը մեծ նշանակություն ունեցավ Լուսավանը քաղաքի վերածելու գործում. մեծ քանակությամբ բանվորներ տեղափոխվեցին ավան և ապահովվեցին աշխատանքով, լայն թափով ծավալվեց բնակարանային շինարարությունը, երևան եկան բազմաթիվ բարձրահարկ բնակելի շենքեր։

Այսպիսով, Լուսավանի արդյունաբերական կենտրոնն ստեղծվում է յոթնամյակի կեսերին։ Իրար հետևից գործարկվում են չորս խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն հանրապետության արդյունաբերության զարգացման մեջ։ Երկաթ-բետոնյա կառուցվածքների գործարանը իր արտադրանքով ապահովում է ինչպես հիդրոկայանների, այնպես էլ արդյունաբերական կարևոր կառույցների շինարարության պահանջները։ Ներտաշ հաստոցների գործարանը մեծ դեր է կատարում ՍՍՀՄ-ում արդյունաբերական նոր ձեռնարկությունների գործարկման, ինչպես նաև գործող ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցման գործում։ Լուսավանի

---

37 Տե՛ս նույն տեղում, թ. 9—11։

38 «Սովետական Հայաստան», № 38, 1963 թ.։

39 Տե՛ս Զարենցավանի շինվարչության ընթացիկ արխիվ, 1963 թ. հրամանների գիրք։

ներտաշ հաստոցները լայն ճանաչում են ստանում մեր երկրում, իսկ 1963—1964 թթ., տեխնիկական կատարելագործման ենթարկված հաստոցների նոր նմուշները հաջողությամբ արտահանվում են արտասահման։ Գործիքաշինական գործարանն ու կենտրոնական ձուլարանը յոթնամյակի վերջում դառնում են առանձին արդյունաբերական ձեռնարկություններ։ Հանրապետության հաստոցաշինական ու մեքենաշինական ձեռնարկությունները ապահովվում են ինչպես արդյունաբերական սարքավորումներով, այնպես էլ խոշոր դետալների սեփական ձուլվածքով։ Այդ ձեռնարկությունների դերը մեծ է նաև Անդրկովկասի եղբայրական հանրապետություններում ծանր արդյունաբերության զարգացման գործում։

Լուսավանի արդյունաբերական համալիրը յոթնամյակում հանրապետության մեծ նվաճումներից է։

СОЗДАНИЕ ЛУСАВАНСКОГО ПРОМЫШЛЕННОГО ЦЕНТРА

Г. Т. СИМОНЯН

Резюме

XX и XXI съезды КПСС открыли новые перспективы для развития промышленности Армянской ССР. В Армении было создано 12 станкостроительных заводов. В Лусаване (ныне Чаренцаван), построенном в 1946—1962 гг. как поселок для строителей Гюмушгэса, также создавались крупные промышленные предприятия—инструментальный завод и центролит, а также завод расточных станков, известный по всей стране. С завершением строительства предприятий Лусаван стал промышленным городом, обеспечивающим инструментами и чугунным литьем машиностроительные и станкостроительные заводы республики.

ЦК КП и правительство Армении, а также Разданский районный комитет КП Армении и первичные партийные организации, вложили огромный труд в создание нового промышленного центра республики.